



ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ք. Երևան

04.04.2017թ.

Հրաման հ. 058-17

Տեղեկատվական և գովազդային արտադրանքի ձեռքբերման գնման գործընթացը նախապատրաստելու նպատակով պատասխանատու ստորաբաժանում և գնումը համակարգող սահմանելու մասին

1. Տեղեկատվական և գովազդային արտադրանքի ձեռքբերման գնման գործընթացը նախապատրաստելու նպատակով ստեղծել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

Վահե Երիցյան – ՏՀՏ բովանդակության բաժնի ավագ մասնագետ,

Նոռա Սմբատյան – ՏՀՏ բովանդակության բաժնի մասնագետ:

2. Գնահատող հանձնաժողովի պարտականությունները դնել պատասխանատու ստորաբաժանման վրա:

3. Գնումը համակարգող սահմանել Լիլիթ Գևորգյանին:

Տնօրեն՝

Ա. Գողոսյան

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»

ՊՈԱԿ-ի իրավաբան, գնումները համակարգող

Լ. Գևորգյանին

Պատասխանատու ստորաբաժանում՝

Վահե Երիցյանից

Կից ներկայացնում եմ Տեղեկատվական և գովազդային արտադրանքի
ծեղքբերման գնման հայտը:

Պատասխանատու ստորաբաժանում՝



Վ. Երիցյան

19.04.2017թ.

ԳՆՄԱՆ ՀԱՅՏ

Տեղեկատվական և գովազդային արտադրանքի ձեռքբերման նպատակով հաստատում ենք ստորև ներկայացվող գնման հայտը:

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.

| Չափ արժ նի N | Անվանումը | Տեխնիկական բնութագիր |
|--------------|-----------|--|
| 1 | 2 | |
| 1 | Բուկլետ | A5, 44 էջ, կազմ (լամինացված), գունավոր |

Պատասխանատու ստորաբաժանում՝



Վ. Երիցյան

18.04.2017թ.

*Քանակը հայտը կազմելուս է սահմանափակ
կազմելու համարաչափաբանում:
18.04.2017թ
Վ. Երիցյան*

«Տեղեկատվական և գովազդային արտադրանքի ձեռքբերման»

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել մինչև 13 մայիսի 2017 թ. | | | | | | | | Ընդամենը | |
|----------|-----------|----------------|--------------|--|------|-------------|------|--------------|------|-------------|------|----------|----|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Բուլկետ | հատ | | | | 300 | | | | | | 300 | |
| Ընդամենը | | | | X | | X | | X | | X | | X | |

Պատասխանատու ստորաբաժանում՝



Վ. Երիցյան

18.04.2017թ.

«Տեղեկատվական և գովազդային արտադրանքի ձեռքբերման»

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ն դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ. ¹ ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | |
|----|-----------------------|---|-------------|--------------|-------------|---------------|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը տարի |
| 1. | Բուկլետ | - | 100% | 100% | 100% | 100% |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պատասխանատու ստորաբաժանում՝



Վ. Երիցյան

18.04.2017թ.

Գնման առարկաների պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար

նախատեսված առավելագույն գինը

ՀՀ դրամ

| Չ/Հ | Անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Ընդ. գինը |
|-----|-----------|----------------|--------|--------------|-----------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Բուլկետ | հատ | 300 | 1470 | 441000 |

Պատասխանատու ստորաբաժանում՝



Վ. Երիցյան

18.04.2017թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ ներքոստորագրյալս, որպես Տեղեկատվական և գովազդային արտադրանքի գնման հայտը նախագծող անձ, սույնով հաստատում եմ, որ ինձ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփությամբ կապված անձինք (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) և (կամ) այդ անձանց կողմից հիմնադրած կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունները չեն կարող հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակից:

Պատասխանատու ստորագրածանում՝



Վ. Երիցյան

18.04.2017թ.

Vahe Yeritsyan

From: Aram Khachatryan <a.khachatryan@albedo.am>
Sent: Saturday, April 15, 2017 9:57 PM
To: vahe@ktak.am
Subject: Gnarajark

Գները նշված են առանց ԱԱՀ

Սերտիֆիկատ - 20x220
Մագնիս-բացիչ - 80x600
Բաժակի տակդիր - 80x800
Բլոկնոտ - 200x600
Գրիչներ - 200x350
Էջանիչ - 200x150
Բուկլետ - 300x1400
Բեյջի թել և տպագրություն - 80x600
Բեյջ - 80x250
Բաններ 160x80 - 1x5000
Թղթապանակ - 80x700
Օրացույց սեղանի 2017-2018 - 80x2500

--

ALBEDO Բ Ա Բ Ե Դ Ո
ADVERTISING PRODUCTION COMPANY

Aram Khachatryan
Technical Director
Mob: +374 93 979070
Website: www.albedographics.com
Facebook: [AlbedoGraphics](https://www.facebook.com/AlbedoGraphics)

ՄԻ ՕԼ ՄՊԸ

ք. Երևան, 1 Մայիսյան 33ա, քն 8

ՀՎՀՀ 02621785

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկ ՓԲԸ

h/h 220565590290000


Գնային առաջարկ

| N | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Միավորի արժեք | Գումար |
|---|----------------------------|---------------|-------|---------------|---------|
| 1 | Բուկլետ A5 44 էջ + կազմ | հատ | 300 | 1470 | 441 000 |

ԸՆԴՀԱՆՈՒՐ

441 000 (չորս հարյուր քառասունմեկ հազար)

Տնօրեն



Գ. Ավետիսյան

17.04.2017

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿՏԱԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/2**

ք. Երևան

«21» «ապրիլի» 2017թ.

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Արտակ Պողոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՍԻ ՕԼ» (ՍՊԸ), ի դեմս տնօրեն Զարինե Ավետիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեղեկատվական և գովազդային արտադրանքը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Կատարողն Ապրանքը մատակարարում է Պատվիրատուին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Կատարողը Ապրանքը հասցնում է Պատվիրատուին՝ նրա կողմից նշված հասցեով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատուց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.1.7.1 Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Կատարողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.3.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Պատվիրատուին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 441000 (չորս հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Կատարողն Ապրանքը հանձնում է Պատվիրատուին՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Պատվիրատուն Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ

փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է /// էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կրացյան 73
Հայէկոնոմբանկ, Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ 163048288407
ՀՎՀՀ 01550374

Տնօրեն



Ա. Պողոսյան
(տնօրեն/պրեզիդենտ)




ԿԱՏԱՐՈՂ

«Սի Օլ» ՍՊԸ
Ք. Երևան Մայիսյան 33ա, բն 8
Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220565590290000
ՀՎՀՀ 02621785

Տնօրեն


Ջ. Աղետիսյան
(տնօրեն/պրեզիդենտ)





Տեղեկատվական և զովագրային արտադրանքի ձեռքբերման



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափ աբաժ նի N | Անվանումը | Տեխնիկական բնութագիր |
|---------------------|-----------|--|
| 1 | 2 | |
| 1 | Բուկլետ | A5, 44 էջ, կազմ (լամինացված), գունավոր |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ


/ստորագրություն/
Կ.Տ.



/ստորագրություն/
Կ.Տ.


ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ


ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ


«Ն» դրամ


| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել մինչև 13 մայիսի 2017 թ. | | | | | | | | Ընդամենը | |
|----------|-----------|----------------|--------------|--|------|-------------|--------|--------------|------|-------------|------|----------|--------|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Բուկլետ | Հատ | 1470 | | | 300 | 441000 | | | | | 300 | 441000 |
| Ընդամենը | | | | X | | X | 441000 | X | | X | | X | 441000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ


 /ստորագրություն/
 Կ.Տ.


 /ստորագրություն/
 Կ.Տ.



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ


ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որամ»


| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | |
|----|-----------------------|---|-------------|--------------|-------------|---------------|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը տարի |
| 1. | Բուկլետ | - | 441000 | 441000 | 441000 | 441000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


 /ստորագրություն/
 Վ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ


 /ստորագրություն/
 Վ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻ ՕԼ» ՍՊԸ
Ք. Երևան Մայիսյան 33ա, բն 8
Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220565590290000
ՀՎՀՀ 02621785

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վրացյան 73
Հայէկոնոմբանկ, Մպանդարյան մասնաձյուղ
Հ/Հ 163048288407
ՀՎՀՀ 01550374

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ե Դ ՈՒ Ն Մ Ա Ն**

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Գովազդային նյութերի ձեռքբերման Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «21» «ապրիլի» 2017թ.
Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Վահե Երիցյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «ՍԻ ՕԼ» ՍՊԸ, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Մատակարարված ապրանքների | | | | | |
|---|-----------|---|--|---------|--|---------|-------------------------------------|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացուցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍԻ ՕԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. Ապրիլի 21-ին կնքված գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Անվանումը | Ապրանքի | |
|-----------|-------------------------------|--------------|
| | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԻ ՕԼ» ՍՊԸ
ՔՄ Երևան Մայիսյան 33ա, բն 8
Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220565590290000
ՀՎՀՀ 02621785

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վրացյան 73
Հայեկոնոմբանկ, Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ 163048288407
ՀՎՀՀ 01550374

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«12» «մայիսի» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Տեղեկատվական և զովագրային արտադրանքի ձեռքբերման Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «21» «ապրիլի» 2017թ. Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Վահե Երիցյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «ՄԻ ՕԼ» ՍՊԸ, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «12» «մայիսի» 2017թ. կազմված՝ զնման հայտը նախագծած ներկայացուցչի ՈՒ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և զնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Մատակարարված ապրանքների | | | | | | | | |
|-------------------------|-----------------|---|--|---------|--|--------------------|-------------------------------------|--|
| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված զնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված զնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Բ ու կ լ ե տ | A5, 44 է ջ , կ ա գ մ (և մ ի ն ա գ վ ա ծ), գ ու ն ա վ ո թ | 300 | 300 | 13 մայիսի 2017թ | 12 մայիսի 2017թ | 441 | II եռամսյակ |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Պայմանագրություն



Ապրանքը ընդունեց

Պայմանագրություն

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՄԻՕԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. Ապրիլի 21-ին կնքված զննան պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ մայիսի «12»-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|-----------|-------------------------------|--------------|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| Բուկլետ | 300 | հ ա տ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց




ազգանուն, անուն
ստորագրություն




Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝



ազգանուն, անուն
ստորագրություն



| | | | | | |
|------------------------------------|-------|---------|--|---------------------------|------------|
| [1] Ռուրս գրման ամսաթիվ | | | Հաշիվ սպրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Մերիա | [3] Համար |
| 22 | Մայիս | 2017 թ. | | Բ | 9776737845 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | Ճշգրտվող հաշիվ սպրանքագրի | |
| 12 | Մայիս | 2017 թ. | | Մերիա | Համար |
| | | | Ճշգրտվող հաշիվ սպրանքագրի դուրս գրման ամսաթիվ | | |
| Պարանագիր | | | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) | | | | | |

| | | | | | | | | |
|--|--|---|---|---|---|---|---|---|
| Մատայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | | | | | | | | |
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 2 | 6 | 2 | 1 | 7 | 8 | 5 |
| [9] Անվանումը | «ՍԻ ՕԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | | | | | | | |
| [10] Բանկային տվյալները | ԱԿԲԱ-ԿՐԵՒՄՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ ՓԲԸ N 220565590290000 | | | | | | | |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 33Ա 8 | | | | | | | |
| [12] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | |

| | | | | | | | | |
|--|---|---|---------|----------------|---|---|---|---|
| Մատայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | | | | | | | |
| [13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 1 | 5 | 5 | 0 | 3 | 7 | 4 |
| [14] Անվանումը | «ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | | | | | | | |
| [15] Բանկային տվյալները | Հայելոնուրանկ Ապանդարյան մասնաճյուղ | | | N 163048288407 | | | | |
| [16] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎՈՒՆԻ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ Փ. 37 | | | | | | | |
| [17] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | |
| [18] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | Համար | | | | | |
| | Լիազորագիր | | Ամսաթիվ | | | | | |

| [19] Մատայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը | | | | | |
|---|--|--------------|---|--------------|----------|
| № ըստ | Մատայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Հարկանքով ծավալը կամ ծանուցանված քանակը | Միավորի գինը | Ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Բուկլետ | խտր | 300 | 1470 | 441000 |
| Ընդամենը | | | | | 441000 |

Մատայություն մատուցող (աշխատանք կատարող)
AVETISYAN MIHRAN 1410640469
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Մատայություն (աշխատանք) ստացող
IPEKCHYAN HASMIK 6908740269
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

22/05/2017 16:37:13

23/05/2017 11:52:50

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

" 12 " " մայիսի ", 2017 թ.

Պայմանագրի անվանումը՝ Տեղեկատվական և գովազդային արտադրանքի ձեռքբերման

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ " 21 " " ապրիլի ", 2017 թ.

Պայմանագրի համարը N «ԿՏԱԿ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2»

Պատվիրատուի անվանումը՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Պայմանագրի կողմի անվանումը՝ «ՍԻ ՕԼ» ՍՊԸ


Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ մատակարարումները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | |
|---|--|---|--|---------|--|--------------|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի | փաստացի |
| 1 | Բուկլետ | A5, 44 էջ, կազմ (լամինացված), գունավոր | 300 | 300 | Մինչև 13.05.2017թ. | 12.05.2017թ. |

-Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ՝ _____ Դրական _____ եզրակացություն:
(դրական/բացասական)

" 12 " " մայիսի ", 2017 թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝



Վահե Երիցյան